ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2018 թվականի _____ _____-ի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ գլուխը, ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 15-ի նիստի N 36 արձանագրային որոշումը.

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է հաստատել.

1. Հայաստանի Հանրապետության պատմական բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
_____-ի
N_____-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ ՓՈՓՈԽՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության պատմական բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերի մշակման փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման ընթացակարգերին, նախագծման առաջադրանքին, նախագծերի կազմին ու բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները:

2. Պատմամշակութային հիմնավորման նախագիծը՝ պատմական բնակավայրերի կամ դրանց առանձին հատվածների կամ պատմամշակութային արգելոցների պահպանման, վերականգնման (վերստեղծման) և օգտագործման պայմանակարգեր սահմանող քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է: Պատմական բնակավայրերը դրանք պատմականորեն ձևավորված կամ պատմական կենտրոն ունեցող բնակավայրերն են, որոնց պատմական միջավայրի պահպանման և օգտագործման խնդիրներից ելնելով կազմվում են պատմամշակութային հիմնավորման նախագծեր:

3. Պատմականորեն ձևավորված կամ հուշարձաններով հարուստ բնակավայրերի զարգացման ընթացքում հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության համար բարենպաստ պայմաններ ապահովելու, դրանց քաղաքաշինական և գեղագիտական դերը պահպանելու նպատակով և ելնելով նոր կառուցապատում իրականացնելու համար որոշակի պայմաններ սահմանելու նկատառումից՝ կազմվում է բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագիծ:

4. ՀՀ պատմական բնակավայրերի ցանկը կազմվում է ՀՀ մշակույթի ոլորտի պետական լիազոր մարմնի կողմից և հաստատվում ՀՀ կառավարության որոշմամբ:

5. Պատմամշակութային հիմնավորման նախագծերը կարող են մշակվել պատմական բնակավայրերի, կամ դրանց առանձին հատվածների համար:

6. Պատմամշակութային հիմնավորման նախագծի մշակման համար որպես պատվիրատու կարող են հանդես գալ համայնքը, մշակույթի ոլորտի պետական լիազոր մարմինը, կամ քաղաքաշինության ոլորտի պետական լիազոր մարմինը:

7. Պատմամշակութային հիմնավորման նախագծի հետ միաժամանակ մշակվում են բնակավայրում առկա հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը, եթե դրանք դեռևս մշակված չեն:

8. Պատմամշակութային հիմնավորման նախագծով սահմանվում են պատմական բնակավայրի սահմանները, հուշարձանների պահպանական գոտիների սահմանները, դրանց օգտագործման պայմանակարգերը, պատմական բնակավայրերի կամ դրանց առանձին հատվածների պահպանման, վերականգնման, վերստեղծման և օգտագործման պայմանակարգերը (ռեժիմներ):

9. Պատմական բնակավայրերի (բնակավայրի պատմական հատվածի) սահմաններում ցանկացած գործունեություն համաձայնեցվում է քաղաքաշինության և մշակույթի ոլորտի պետական լիազոր մարմինների հետ:

10. Սահմանված կարգով հաստատված պատմամշակութային հիմնավորման նախագծերը (առկայության դեպքում) ելակետային նյութ են հանդիսանում տեղական և միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման համար, վերջիններիս փաթեթում ներառվում են որպես առանձին հավելված, իսկ դրույթները հաշվի են առնվում տարածական պլանավորման փաստաթղթերում:

11. Պատմամշակութային հիմնավորման նախագծերի բացակայության դեպքում տեղական և միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման շրջանակներում.

1) որպես ելակետային նյութեր ընդունվում են ՀՀ կառավարության որոշումներով հաստատված հուշարձանների պետական ցուցակները, ինչպես նաև մշակույթի ոլորտի լիազոր մարմնի կողմից տրամադրված տվյալները՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների զբաղեցրած տարածքների և պահպանական գոտիների վերաբերյալ:

2) առաջադրանքում ամրագրվում է տեղեկատվություն պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների (այդ թվում՝ նաև նորահայտ հուշարձանների) զբաղեցրած տարածքի և պահպանական գոտիների մակերեսների և օգտագործման պայմանակարգերի վերաբերյալ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությանը ներկայացվող հիմնական պահանջները,

3) հենակետային հատակագծում ամրագրվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների զբաղեցրած տարածքների սահմանները, հուշարձանների պահպանական գոտիների սահմանված կարգով հաստատված սահմանները և օգտագործման պայմանակարգերը:

4) հիմնական գծագրում (զարգացման գծագիր) նշվում են լիազոր մարմնի կողմից տրամադրված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների զբաղեցրած տարածքների սահմանները, հուշարձանների պահպանական գոտիների հաստատված սահմանները, իսկ դրանց բացակայության դեպքում՝ նախագծողների կաղմից առաջարկվող ժամանակավոր պահպանական գոտիների սահմանները և օգտագործման պայմանակարգերը, մինչև հուշարձանների պահպանության բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից դրանց ճշգրտումը և սահմանված կարգով հաստատումը:

5) տեքստային մասում՝ գլխավոր հատակագծի (կամ համակցված փաստաթղթի) իրագործման միջոցառումներ բաժնում նշվում են պատմամշակութային հուշարձանների պահպանության միջոցառումներն՝ ըստ առաջնահերթությունների:

II. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

12. Պատմամշակութային հիմնավորման նախագծի առաջադրանքը

1) Պատմամշակութային հիմնավորման նախագիծը մշակվում է մշակույթի ոլորտի պետական լիազոր մարմնի և նախագծի պատվիրատուի հետ համատեղ կազմված և համայնքի ավագանու կողմից հաստատված առաջադրանքի հիման վրա, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման համապատասխան լիցենզիա ունեցող անձանց հետ՝ նմանատիպ փաստաթղթերի մշակման փորձ ունեցող մասնագետների ներառմամբ (անհրաժեշտության դեպքում նեգրավելով այլ ոլորտի մասնագետների) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված նախագծային կապալի պայմանագրով:

2) Մինչև համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը, պատմամշակութային հիմնավորման նախագծի առաջադրանքը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ գլխավոր հատակագծերի մշակման նախագծման առաջադրանքի համար սահմանված կարգով ներկայացվում է հանրային քննարկման, անհրաժեշտության դեպքում լրամշակվում է և ներկայացվում ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ միջգերատեսչական հանձնաժողով) հետ համաձայնեցման:

3) Միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացություն ստացած առաջադրանքի նախագիծը հաստատվում է համայնքի ավագանու կողմից և հիմք է հանդիսանում պատմամշակութային հիմնավորման նախագծի մշակման համար:

4) Եթե համայնքի ավագանին չի հաստատում առաջադրանքի նախագիծը՝ հարցը քննարկվում է միջգերատեսչական հանձնաժողովի նիստում:

5) Առաջադրանքի նախագիծը համարվում է համայնքի ավագանու կողմից հաստատված միայն միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում:

13. Պատմամշակութային հիմնավորման նախագծի մշակումը

Պատվիրատուն՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված քաղաքաշինական փաստաթղթեր մշակողին (այսուհետև՝ կատարող) տրամադրում է նախագծային առաջադրանքը և մշակույթի ոլորտի լիազոր մարմնի կողմից տրամադրված՝ նախագծման համար անհրաժեշտ ելակետային նյութերը, կատարողի հետ օրենքով սահմանված կարգով կնքում է պայմանագիր:

2) Բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման և հուշարձանների պահպանական գոտիների նախագծերի մշակման համար քաղաքաշինության ու հուշարձանների պահպանության բնագավառներում մասնագիտացված կազմակերպությունների և գիտական հիմնարկների կողմից կատարվում են պատմաճարտարապետական ու քաղաքաշինական հետազոտություններ՝ լիազոր մարմնի հետ համաձայնեցված ծրագրային առաջադրանքների հիման վրա:

Պատմամշակութային հիմնավորման նախագիծը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ գլխավոր հատակագծերի մշակման համար սահմանված կարգով ներկայացվում է հանրային քննարկման, անհրաժեշտության դեպքում լրամշակվում է և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվում է համալիր փորձաքննության:

14. Պատմամշակութային հիմնավորման նախագծի փորձաքննությունը

1) Պատվիրատուն, ստանալով կապալառու նախագծային կազմակերպության կողմից մշակված նախագիծը, ներկայացնում է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված փորձաքննության: Կապալի պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, նախագիծը փորձաքննության կարող է ներկայացվել նախագծող կազմակերպության կողմից:

2) Փորձաքննությունն իրականացվում է պատվիրատուի (կամ կապալառու նախագծային կազմակերպության) և փորձաքննություն կատարողի միջև կնքվող պայմանագրի համաձայն:

3) Պատմամշակութային հիմնավորման նախագծերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ «Շրջակա

միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավասու մարմնի կողմից հասարակության իրազեկումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հասարակական լսումների շրջանակներում:

15. Պատմամշակութային հիմնավորման նախագծի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները

Պատմամշակութային հիմնավորման նախագիծը մշակվում է գրաֆիկական և տեքստային մասերով:

Գրաֆիկական մասում.

1) Հենակետային հատակագիծ, Մ1:2000, 1:1000 կամ 1:500:
Գծագրի մասշտաբին համապատասխանող տեղագրական հանույթի և կադաստրային քարտեզի վրա ներկայացվում է փաստացի իրավիճակը, հուշարձանները, պետական ցուցակում դրանց համապատասխանող համարները, հուշարձաններով զբաղեցված տարածքները, պահպանական գոտիների հաստատված սահմանները (առկայության դեպքում), բնակավայրի դեպքում՝ կառուցապատումը, հիմնական փողոցները և հուշարձանների հարևանությամբ գտնվող կառույցները և այլն:

2) Հիմնական (զարգացման) գծագիր, Մ1:2000, 1:1000 կամ 1:500:

Հիմնական գծագրում հենակետային հիմքի վրա նշվում են.
ա. պատմամշակութային հուշարձանները՝ զբաղեցրած տարածքներով և պահպանական գոտիներով (մինչև նախագծի մշակումը հաստատված և նախագծով առաջարկվող),

բ. բնակավայրի պատմական հատվածների և թաղամասերի վերականգնման և օգտագործման (մշակութային, զբոսաշրջության և առողջարանային գործառույթների զարգացման) հայեցակարգային առաջարկներ՝ ապահովելով պատմական միջավայրը,

գ. հուշարձանախմբերի ու հուշարձանների պահպանության նպատակով անհրաժեշտ միջոցառումներ՝ ըստ բնույթի և տեսակի,

3) Բարեկարգման և կանաչապատման հատակագիծ, Մ1:2000, 1:1000 կամ 1:500:

Տարածքի բարեկարգման և կանաչապատման հատակագծում ներկայացվում են տարածքի բարեկարգման և կանաչապատման լուծումները, բարեկարգման տարրերը, հանգույցները, կիրառվող նյութերը և բույսերը:

Տեքստային մասում ներկայացվում են.

1) նախագծվող տարածքի սահմանների նկարագրությունը,

2) պատմական և տեղագրական ակնարկ,

3) բնակավայրի պատմության և մշակութային անշարժ հուշարձանների պետական ցուցակը,

4) տվյալներ բնակավայրի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների առկա վիճակի մասին,

5) պատմության և մշակութային հուշարձանների պահպանական գոտիների համակարգի օգտագործման պայմանակարգերի (ռեժիմը) աղյուսակը,

6) բնակավայրի առանձին հատվածների պահպանության ու վերակառուցման վերաբերյալ նախագծային առաջարկություններ,

7) առանձին հուշարձանների վերականգնման, տարածքների մաքրման և բարեկարգման վերաբերյալ առաջարկություններ,

8) պատմամշակութային հիմնավորման նախագծի իրագործման միջոցառումներ՝ ըստ առաջնահերթությունների:

16. Պատմամշակութային հիմնավորման նախագծի համաձայնեցումը, հաստատումը և փոփոխումը

1) Փորձաքննության դրական եզրակացություն ստացած պատմամշակութային հիմնավորման նախագիծը պատվիրատուի կողմից ներկայացվում է քաղաքաշինության ոլորտի լիազոր մարմին՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով համաձայնեցնելու և նախագծի վերաբերյալ միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը ստանալու համար:

2) Լիազոր մարմինը նախագիծը քննարկում և ներկայացնում է միջգերատեսչական հանձնաժողովում ընդգրկված գերատեսչությունների և կազմակերպությունների համաձայնեցմանը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ գլխավոր հատակագծերի համար սահմանված ընթացակարգով:

3) Միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը ստանալուց հետո պատվիրատուն նախագիծը ներկայացնում է հաստատման:

4) Պատմամշակութային հիմնավորման նախագծերի դեպքում միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունը փոխարինում է (համարժեք է) պետական համալիր փորձաքննություն իրականացնող հանձնաժողովի եզրակացությանը:

5) Եթե պատմամշակութային հիմնավորման նախագիծը հանգեցնում է գլխավոր հատակագծի և (կամ) համակցված փաստաթղթի փոփոխություններին, այն հաստատվում է, համապատասխանաբար գլխավոր հատակագծում և (կամ) համակցված փաստաթղթում համապատասխան փոփոխությունների հաստատումից հետո:

6) Պատմամշակութային հիմնավորման նախագծի փոփոխումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ գլխավոր հատակագծերի փոփոխման համար սահմանված ընթացակարգով:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)

Հայաստանի Հանրապետության պատմական բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերի մշակման փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի մշակման անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 15-ի նիստի N 36 արձանագրային որոշմամբ հաստատված՝ պատմամշակութային հուշարձանների պահպանության, օգտագործման և հանրահռչակման 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների 5-րդ կետի միջոցառման կատարումն է և ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 38-րդ կետի պահանջն է:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

<<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի (այսուհետև՝ օրենք) 17-րդ հոդվածի 4-րդ մասի <<ե>> պարբերության համաձայն բնակավայրերի պատմամշակութային հիմնավորումների նախագիծը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է, որը ելակետային նյութ է հանդիսանում տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման համար:

Ներկայումս բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերի մշակման փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը բացակայում է:

Խնդիրները՝ պատմամշակութային հիմնավորման նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման ընթացակարգի սահմանումն են:

3. Կարգավորման նպատակը և բնույթը

Բնակավայրի պատմամշակութային հիմնավորման նախագիծը կազմվում է՝ հուշարձաններ ունեցող բնակավայրերի զարգացման ընթացքում հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության համար բարենպաստ պայմաններ ապահովելու, դրանց քաղաքաշինական և գեղագիտական դերը պահպանելու նպատակով, և ելնելով նոր կառուցապատում իրականացնելու համար որոշակի պայմաններ սահմանելու նկատառումից:

Սույն կարգի մշակման նպատակը հուշարձաններ ունեցող բնակավայրերում հուշարձանների պահպանությունը և անխաթարությունն ապահովելը, պատմականորեն ձևավորված կամ հուշարձաններով հարուստ բնակավայրերի զարգացման ընթացքում հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության և բարենպաստ պայմանների ապահովումը, դրանց քաղաքաշինական ու գեղագիտական դերը պահպանելը և ելնելով նոր կառուցապատում իրականացնելու խնդիրներից՝ որոշակի պայմաններ սահմանելը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և ՀՀ մշակույթի նախարարության կողմից:

5. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Որոշման ընդունման արդյունքում կկանոնակարգվի պատմական բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերի համաձայնեցման ու հաստատման գործընթացը, նախագծերը կմշակվեն որոշակի միասնական սկզբունքներով և տեսքով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության պատմական բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերի մշակման փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումն այլ իրավական ակտերում փոփոխությունների անհրաժեշտություն չի առաջացնում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԵՎ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության պատմական բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերի մշակման փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի առաջացնում: